

# **Ինչպես կ'ապրես երբ իմանաս թե մեռնելու ես**

«Սովորեցրու մեզ, որ այնպես համարենք մեր օրերը, որ իմաստուն սիրտ ընդունենք:» Սաղմոս 90:12

«Ես եկա որպեսզի կյանք ունենաք, և կյանքը լինի առավել լեցուն:» Յովհաննես 10:10

## **Հիսուսը և Ղազարոսը, (Յովհաննես 11:38-44)**

«Հիսուսը դարձյալ ներքնապես հուզվեց և մոտեցավ գերեզմանին, որը մի քարայր էր, և որի մուտքին մի քար էր դրված: Հիսուսն ասաց. **Վերցրեք քարը:** Մարթան մեռածի քույրը ասաց նրան. **Տեր հիմա արդեն նեխած կլինի, որովհետև չորս օր է ինչ թաղված է:** Հիսուսն ասաց **Մարթային. Քեզ չասացի որ եթե հավատաս, կտեսնես Աստու փառքը. երբ նրանք վերցրին քարը, Հիսուսն աչքերը վեր բարձրացրեց և ասաց. Հայր, շնորհակալություն քեզ որ ինձ լսեցիր. Գիտեմ, որ միշտ լսում ես ինձ, բայց ինչ որ այժմ ասում եմ, շուրջս գտնվող ժողովրդի համար եմ ասում, որպեսզի նրանք հավատան որ դու ուղղարկեցիր ինձ. այս ասելուց հետո բարձր ձայնով աղաղակեց. **Ղազարո՛ս, դու՛րս եկ: Եվ Ղազարոսն ելավ ոտքերն ու ձեռքերը պատանքով փաթաթված և երեսը վարշամակով ծածկված: Հիսուսն ասաց նրանց. Քանդեցեք պատանքը և թողեք, որ գնա:»****

## **1. Քաջությամբ կատարեմ այն ինչ որ ճիշտ է**

«...**(Հիսուսը) բարձր ձայնով աղաղակեց. Ղազարո՛ս, դու՛րս եկ: »** Յովհաննես 11:43

«Մեր մեղքերն ինքը կրեց, իր մարմնով խաչի վրա որպեսզի մեղքի տիրապտությունից ազատված արդարության համար ապրենք մենք:» Ա Պետրոս 2:24

## **2. Ստուգեմ և ընտրեմ իմ առաջնությունները**

«Հիսուսը եկավ **Բեթանիա**, որտեղ ապրում էր **Ղազարոսը**, այն մարդը, որը մեռած էր, և որին **Հիսուսը** հարություն էր տվել **մեռելներից**. Այդտեղ նրա համար ընթրիք պատրաստեցին: Մարթան սպասարկում էր, և **Ղազարոսն էլ սեղանակիցներից մեկն էր:**» Յովհաննես 12:1-2

«Սիրիր քո **Տեր Աստու**ն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ: Երկրորդը որ նման է սրան, այս է. **Սիրիր ընկերոջդ քո անձի պես:** Այս երկուսից ավելի մեծ պատվիրան չկա:» Մարկոս 12:30-31

## **3. Կյանքս ուղղեմ դեպի հավիտենականություն**

«Հրեաների մի մեծ բազմություն էր **իմացավ** որ, **Հիսուսը Բեթանիայում է, եկավ, ոչ միայն Հիսուսի համար, այլ նաև տեսնելու Ղազարոսին**, որին **Հիսուսը** հարություն էր տվել **մեռելներից:** Ուստի ավագ քահանաները որոշեցին **Ղազարոսին էլ սպանել, որովհետև հրեաներից շատերը գնում էին Ղազարոսին տեսնելու և հավատում էին Հիսուսին:**» Յովհաննես 12:9-11

«Սա է նրանց ծանապարհը որ հիմար են, և նրանց հետևողները հավանում են նրանց խոսքին: **Ոչխարների պես գերեզմանի մեջ են մատնվում:** Սահը նրանց հովիվն է և ուղիղները առավոտանց կտիրապետեն նրանց. և նրանց կերպարանքը կմաշվի գերեզմանումը իրանց բնակարաններիցը դուրս:» Սաղմոս 49:13-14

«Քրիստոսը մեռավ բոլորի համար, որպեսզի հավատով կենդանացողներն այլևս չապրեն իրենց համար, այլ նրա համար, որ մեռավ և հարություն առավ իրենց համար:» Բ Կորնթացիս 5:15

«Ինչպես մարդիք մեկ անգամ են մեռնում և դրանից հետո Աստու ուստաստանին հանձնվում այնպես էլ **Քրիստոսը** միայն մեկ անգամ որպես զոհ մատուցվեց՝ մարդկանց մեղքերը վերացնելու համար:» Եբրայեցիս 9:27-28

Քարոզը մեկ նախադասության մեջ:

**Երբ պատրաստ եղա մեռնելու համար, այն ժամանակ կ'սկսեմ իրական ապրել.**